



# Հ.Օ.Մ. ԹՈՐՈՆԹՈ "ՌՈՒԲԻՆԱ" ՄԱՍՆԱԾԻՂ ARS TORONTO ROUBINA CHAPTER

## Լրատու Newsletter

07/ 2023



### ՀՕՄ-ի Օր եւ "Ռուբինա" Մասնաճիւղի 60 Ամեայ Ադամանդեայ Յոբելեանը

Watch Nor Hai Horizon coverage of event

Watch Nor Hai Horizon program dedicated  
to 60th Anniversary

- Մասնաճիւղի Լուրեր եւ Տեղեկութիւններ
- Նախկին Զեռնարկներ
- Զանազան

- News from Toronto Roubina Chapter
- Previous Events
- Miscellaneous

# Մասնաճիւղի Լուրեր եւ Տեղեկութիւններ News from Toronto Roubina Chapter

"Սէր, Նուիրում եւ Ճառայութիւն" կարգախօսով, ՀՕՄ-ի Թորոնթոյի "Ռուբինա" մասնաճիւղը, Կիրակի, 30 Ապրիլ 2023-ի յետմիջօրէի ժամը 1:00-ին, Հայ Կեդրոնի սրահէն ներս, ճաշկերոյթի մը շուրջ, տօնախմբեց "ՀՕՄ-ի Օր"ն ու մասնաճիւղիս վերակազմաւորման 60 ամեայ ադամանդեայ յրբելեանը:

Ձեռնարկը վայելեց Սրբ. Տէր Բաբգէն Արք.Չարեանի, կղերականներու, Հ.Հ Դեսպանի, Երեսփոխանի, Սողոմոն Թէհլիրեան կոմիտէութեան ու քոյր միութիւններու ներկայացուցիչներու եւ հոյլ մը ՀՕՄական ընկերուհիներու ներկայութիւնը:

Ընկհ. Մարալ Հրեշտակեանի Բարի գալուստի խօսքէն ետք, ձեռնարկը սկիզբ առաւ Գանատայի, Հայաստանի, Արցախի եւ ՀՕՄ-ի քայլերգներով, որ մեներգեց ՀՕՄ-ի Ամէնօրեայ Վարժարանի, Գոլոյեան Նախակրթարանի աշակերտուհի՝ Լիլի Գարբ, դաշնամուրի ընկերակցութեամբ՝ տիկ. Թալին Գըլըպոզեանի: Ապա՝ ներկաները յոտնկայս յարգեցին մեզմէ առյաւէտ բաժնուած ՀՕՄ-ուհիներուն յիշատակը: Ընկհ. Լուսին Թէհլիրեանի բացման խօսքէն ետք, մասնաճիւղիս ատենապետուհի ընկհ. Մարալ Միսիրեան ներկայացուց վարչութեան խօսքն ու տեղեկագիրը:

Օրուայ պատգամն ու խորհուրդը փոխանցեց Պոսթոնէն հրաւիրուած ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ ընկհ. Մայտա Մելքոնեան:

Սրբ. Տէր Բաբգէն Արք.Չարեանին կատարած սեղանի օրհնութենէն ետք, ներկաները համադամ ճաշի և հայկական գինիի ընկերակցութեամբ դիտեցին Օննիկ Նազարեանցի պատրաստութեամբ "Ռուբինա" մասնաճիւղի վաթսունամեակին ձօնուած տեսերիզի ցուցադրութիւնը:

Ձեռնարկը շարունակուեցաւ մասնաճիւղիս հաստատած համալսարանականներու կրթաթոշակ մրցանակներու բաշխումով եւ երիտասարդ կամաւոր մրցանակի տուչութեամբ: Ապա՝ Բարձր գնահատանքի արժանանալով ծաղկեփունջեր ստացան մասնաճիւղիս 60 տարուայ վարչական ատենապետները: Ներկաները ըմբոշխնեցին անզուգական մեներգող Թալին Երեմեանի քաղցրահնչիւն կատարումները՝ "Կաքաւիկ" եւ Somewhere (West Side Story): Ապա՝ իրենց անձնուրաց եւ նուիրեալ ծառայութեան համար պարգեւատրուեցան, Թորոնթոյի գաղութէն ներս մեծ ներդրում ունեցող անձնաւորութիւններ՝

- \* Ընկ. Յարութիւն Շիթիլեան
- \* Ընկհ. Սեդա Մասպանաճեան
- \* Գերապատի՛ւ Հայր Եղիա Ծ. Վրդ. Գիրեշեան

ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան կողմէ յատուկ գնահատագիրով եւ զարդասեղով մը պարգեւատրուեցաւ, ՀՕՄ-ի շարքերէն ներս "75 ամեայ" ծառայութիւն ունեցող՝ ընկհ. Մարի Սարգիսեան, ապա՝ երկարատեւ անդամակցութեան եւ անսակարկ ծառայութեան իբրեւ երախտագիտութիւն, զարդասեղներով գնահատուեցան 60, 50, 35, 25 եւ 15 տարուայ ՀՕՄ-ուհիներ:

60-ամեակի կարկանդակի հատումը կատարեցին ընկերուհի Արմէնուհի Գոլոյեանը եւ հիմնադիրներու զուակներ՝ Արփի Աճէմեանն ու Անի Իպրահիմի: Իսկ աւանդական մոմավառութիւնը կատարեցին չորս սերունդի ներկայացուցիչներ, Ընկերուհիներ՝ Մարի Նախնիկեան, Գեղուհի Պասթաճեան, Թամար Մակարեան եւ Ալիք Մակարեան:

ՀՕՄ-ի առաքելութեան հաւատացող եւ անոր շարքերէն ներս ծառայելու բարձր գիտակցութեամբ նորագիրները ընկհ. Սեդա Թաշճեանի կնքամայրութեամբ, մասնակցեցան երդման արարողութեան:

Օրհնութեան եւ սրտի խօսքով, Սրբ. Տէր Բաբգէն Արք. Եպս. Չարեան, բարձր գնահատեց ձեռնարկն ու ՀՕՄ-ի նուիրեալ աշխատանքը ամբողջ աշխարհի տարածքին՝ Հայաստան, Արցախ եւ Սփիւռք ինչպէս նաեւ շնորհաւորեց մասնաճիւղիս Ադամանդեայ յրբելեանը:

Ներկաները մեծ գոհունակութեամբ եւ անմոռանալի յուշերով հագեցած բաժնուեցան սրահէն:

**ՀՕՄ-ի Գանատայի 26-րդ պատգամաւորական ժողով,  
Յունիս 30 - Յուլիս 2, 2023 / Badkamavoragan meeting June  
30 - July 2, 2023 Montreal**



## Social Services

Հ.Օ.Մ.-ի Ընկերային Ծառայութեան գրասենեակը  
բաց է  
Երկուշաբթիէն Ուրբաթ ժամը 10:00 – 4:00

Our Social Services Office is open Monday-Friday  
10:00 – 4:00

Հեռ: 416-495-0644

[arssocialservices@gmail.com](mailto:arssocialservices@gmail.com)



## Ուտեստեղէնի Արշաւ / Food Drive



**Հայոց Ցեղասպանութեան 108-րդ ամեակի նուիրուած՝ ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» Մասնաճիւղի Ընկերային Ծառայութեան գրասենեակի կազմակերպած ուտեստեղէնի հաւաքը յաջողութեամբ հասաւ իր աւարտին:**

**Շնորհիւ ՀՕՄ-ի ընկերուհիներուն եւ գաղութի նուիրատուներուն, North York Harvest Food Bank-ին յանձնեցինք շուրջ 332.80 քաւոնտ ուտեստեղէն:**

**Շնորհակալութիւն բոլոր մասնակցողներուն ձեր աջակցութեան համար: Ձեզի կը մաղթենք բարեբեր կեանք:**

The Food Drive organized by the ARS Toronto Roubina Chapter Social Services Office, in memory of the 108th anniversary of the Armenian Genocide in April 2023, was successfully completed.

Thanks to ARS members and community supporters, we were able to deliver about 332.80 lb. of food to the North York Harvest Food Bank.

To all participants, thank you for helping us support our community. We wish you all abundant blessings.

## Ճաշի Մատուցում / Meal Serving



Թորոնթո-ի ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճյուղի ծառայութեան հանձնախումբը ուրախութեամբ կը տեղեկացնէ, որ երեք տարուան ընդհատումէ յետոյ՝ Covid-ի սահմանափակումներու պատճառով, 2023 Մայիսի 11-ին յանձնախումբը վերսկսեց սնունդ /ճաշ մատուցել Fieldstone Commons Արարատի բաժիններու հայ բնակիչներուն:  
Միջոցառումը հաջողուած էր, և յանձնախումբը նախատեսած է կրկնել ամէն ամիս:  
Կը խնդրենք հաշուի առնել այս ծրագիրը ձեր նուիրատուիներու մէջ:

The Social Services Committee started their monthly meal preparation and food serving at Fieldstone Commons on May 11th. The committee plans to continue this service on a monthly basis. The committee welcomes donations.

## Կամաւորներու Գնահատանգ / Volunteer Appreciation



**Fieldstone commons nursing homeի մէջ տեղի ունեցաւ կամաւորի գնահատանգի երեկոյ: Ընկերուհիներ՝ Մարի Տարագճեան, Անահիս Օրչանեան, Լենա Օհանէսեան եւ Սեդա Թաշճեան ներկայ եղան եւ ստացան գնահատագրեր:**

During the volunteer appreciation night at Fieldstone Commons, Ungerouhiner Mary Darakjian, Anahis Orchanian, Lena Ohanessian and Seda Tashdjian were honored with awards for their years of work at the nursing home. Congratulations and thank you for all your hard work.

## Falls Prevention Presentation to Seniors



On April 25th, Emma Basmadjian presented to the Seniors Group about Falls prevention. There were around 30 seniors present who enjoyed the interactive presentation.



# Նախկին Ձեռնարկներ Previous Events

## Orientation Night

Չորեքշաբթի Ապրիլ 19-ին կայացած Orientation night-ին ներկայ էին 13 նորագրեալներ եւ 20է ավելի ընկերուհիներ, Ընկհ.Իռէն Թիլիմեան ներկայացուց Կեդրոնական եւ Շրջանային Վարչութեան բաժինը, իսկ մասնաճիւղիս կապուած բաժինը ներկայացուց Ընկհ.Մարալ Միսիրեան:

On Wednesday April 19th, we held an orientation night for new ungerouhis who joined our chapter. Ungh. Iren Telemian presented the ARS Canada Regional and ARS Central sections and Ungh. Maral Misirian presented our Chapter's information.



# Նախկին Զեռնարկներ

## Previous Events

### Ուղեղի Պատմությունը / The Brain Story

On Friday, May 12, 2023, Valerie D’Pavia delivered a captivating lecture titled “The brain story” at the Armenian Community Centre of Toronto. Organized by the Armenian Relief Society (ARS) Toronto Roubina chapter’s educational committee, the event aimed to shed light on the intricate process of brain development and its profound impact on individuals’ lifelong physical and mental well-being.

Dr. Ani Hasserjian, chair of the educational committee, opened the event as the master of ceremonies.

Emma Basmadjian, the ARS Roubina chapter executive board’s representative to the educational committee, introduced the esteemed lecturer, Valerie D’Paiva, RN, BScN, MN.

During her enlightening presentation, D’Paiva explored the science behind brain development and how experiences, starting from the prenatal stage and continuing throughout life, shape the brain, ultimately influencing one’s physical and mental health. She emphasized that brains are not merely “born” but instead constructed through a complex interplay of various factors. Early childhood experiences emerged as a significant social determinant of health, illustrating their profound impact on an individual’s well-being.

Following the lecture, attendees had the opportunity to engage in a stimulating question-answer session, where Maral Misirlian, chair of the Roubina chapter, expressed gratitude to D’Paiva by presenting her with an art book as a token of appreciation for her insightful and thought-provoking presentation. The event, hosted by the ARS Social Services Office and the ARS Educational Committee, concluded with a warm and welcoming reception, fostering a sense of community and connection among all attendees.

# Նախկին Զեռնարկներ Previous Events

## Ուղեղի Պատմությունը / The Brain Story



# Նախկին Ձեռնարկներ Previous Events

## Մայրերու Օր / Mother's Day

ՀՕՄ-ի «Ռուբինա» Մասնաճիղի Մայրերու Օրուան եւ Համբարձում-ի յանձնախումբի կազմակերպութեամբ՝ Շաբաթ, 13 Մայիս, 2023-ին, Սբ.Աստուածածին Եկեղեցւոյ Յովնանեան սրահէն ներս տեղի ունեցաւ մասնաճիղի Մայրերու Օրուան եւ Համբարձման տօներու առթիւ մտերմիկ հաւաք մը, մօտաւոր 90 ներկաներով: Սրահին մուտքը զարդարուած էր յանձնախումբի ընկերուհիներէն՝ Ընկհ.Մարիամ Փոլատեանի պատրաստած փուչիկներու կամարը: Իւրաքանչիւր ներկայի նուիրուեցաւ սեղանները զարդարող անօթներով գոյնզգոյն ծաղիկներ, որոնց վրայ զետեղուած էին Համբարձումի վիճակները: Մայրերուն նուիրուած Պարոյր Սեւակի «Մօր Ձեռքերը» ոտանաւորով բացման խօսքը կատարեց Ընկհ.Պէթթի Գրաճեան Եփրեմեան: Մայրերու օրուան առթիւ գրած արտասանութեամբ իր յատուկ ներկայութիւնը ունեցաւ Ընկհ.Ժանէթ Գիրէջեան: Հաճելի եւ ուրախ մթնոլորտով ներկաները վայելեցին յանձնախումբի ընկերուհիներուն պատրաստած համադամ եւ արատ ճաշերը: Ձեռնարկի երկրորդ բաժնին Ընկհ.Պէթթին փոխանցեց Համբարձման տօնի ու սովորութիւններուն մասին հետաքրքրական գիտելիքներ, որուն յաջորդեց օրուայ բախտաւորի խաղն ու վիճակահանութիւնը: Յանձնախումբի ընկերուհիներուն պատրաստած անուշեղէնի սեղանը հատկանշուեցաւ Ընկհ. Այտա Գանձապետեանի նուիրած կարկանդակով, որուն հատումը կատարեցին ընկերուհիներ՝ Այտա Գանձապետեան եւ Արմէնուհի Գոլոլեան:

ARS Toronto Roubina Chapter Mother's Day Committee organized an amazing event on May 13, 2023 celebrating mothers in the presence of 90 women. The hall and tables were decorated with flowers and a photo booth. Ungh. Janet Kiredjian recited a poem she had composed. Ungh. Betty Kradjian, the MC of the event, entertained the attendees with games and trivia related to Hampartzoum. Ungh. Aida Kantzabedian and Ungh. Armenouhi Kololian cut the cake donated by Ungh Aida.

# Նախկին Ձեռնարկներ Previous Events

## Մայրերու Օր / Mother's Day



# Նախկին Ձեռնարկներ Previous Events

## The Well Spoken Woman - Book Presentation

ARS Toronto "Roubina" chapter's ARS Inspire + Connect + Empower ("ICE") committee's inaugural event took place on Saturday, May 27th. The guest speaker was ungh. Natalie Gokchenian, who spoke about the book Well-Spoken Women by Christine K. Jahnke. Over 50 members and non-members attended this extremely successful event. The event aimed to provide an empowering morning filled with learning, networking, and personal growth.



# Նախկին Ձեռնարկներ Previous Events

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ  
ՀԱՆԴԻՊԵՑԱԻ ԳՈՐԾԱԿԻՑ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ**

**Շաբաթ, 10 Յունիս 2023-ի առաւօտեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.  
Վեհափառ Հայրապետը, Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ,  
հանդիպեցաւ Օնթարիոյի մէջ գործող գործակից Միութիւններու  
ներկայացուցիչներուն հետ:**



# Նախկին Ձեռնարկներ Previous Events

## Garage Sale



ARS Toronto Roubina Chapter Executive organized a garage sale on June 17 & 18. The proceeds of the event will be contributed to Lebanon Aid.



# Զանազան Miscellaneous



**Հ.Օ.Ս.-ի Ամառնային Ճամբար**  
**ՀՈՎԱՆԱԿՈՐԷ՝ ԵՐԵՒԱՅ ՄԸ \$200**  
**Ձեր սրտաբուխ ներդրումը կ'օգնէ երեխան՝**

- Վայելէ Հայկական մթնոլորտ:
- Ստեղծէ անմոռանալի յիշատակներ:
- Մասնակցի մանկավարժական հարուստ ծրագրի:
- Զարգացնէ ընկերային յարաբերական կարողությունները:

Հովանավորութեան համար՝ հեռաձայնել կամ ե-նամակագրել գրասենեակ:  
Տուրքէ զերծ ստացագիր պիտի տրամադրուին նուիրատուներուն (tax deductible receipt):

Կանխայայտ շնորհակալութիւն ձեր քաջալերանքին:

416.491-2675 ext.5  
arssummercamp@gmail.com



**SPONSOR A CHILD TO GO TO**  
**A.R.S. Summer Camp**


**Your generous contribution will help the child:**

- Feel part of the Armenian community
- Develop life / social skills
- Participate in educational programming
- Make lasting friendships
- Create unforgettable memories

**\$200 A WEEK**

Donation receipts will be issued. Also, receive a note of appreciation from the camper!

Call, email, or drop by the office to become a sponsor:  
416.491-2675 ext.5  
arssummercamp@gmail.com



**ՀՕՍ-ի Ամառնային Ճամբարի՝**  
**ՃԱՇԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ**

Իրաքանչիւր Չորեքշաբթի Ճամբարը աշակերտներուն կը սպասարկէ փիզգայ, որուն ծախսն է \$500: Կը խնդրենք ձեր նուիրատուութեամբ քաջալերել սոյն նախաձեռնութիւնը:

Նուիրատուութեան արձանագրութիւնները կատարելու համար՝ հեռաձայնել կամ ե-նամակագրել գրասենեակ: Տուրքէ զերծ ստացագիր պիտի տրամադրուին նուիրատուներուն (Tax deductible receipt):

Կանխայայտ շնորհակալութիւն ձեր քաջալերանքին:

arssummercamp@gmail.com | 416-491-2675 ext.5

# Զանազան Miscellaneous



Կազմակերպութեամբ՝  
ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» Մասնաճիւղին

## Տոհմիկ Օր

Ճօնուած

Լիբանանի  
Հայ Գաղութին

28 եւ 29 Հոկտեմբեր  
2023

Մանրամասնութիւնները  
Յաջորդի



Մփիւռքի Բարախող Միրալ՝  
Չքնաղ Լիբանան

ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճիւղին կազմակերպած՝ աւանդական Տոհմիկ Օրուան 29-րդ տօնակատարութիւնը, Ճօնուած Լիբանանի Հայ Գաղութին որ տեղի պիտի ունենայ 28-29 Հոկտեմբեր 2023-ին: Անհամբեր կը սպասենք ձեզ Հայ Կեդրոնի սրահէն ներս, միասնաբար վայելելու այս իրայատուկ ձեռնարկը:

This year marks the 29th year of the Heritage Day celebrations dedicated to the Armenian Community of Lebanon. It will be held on October 28 & 29, 2023 at the Armenian Community Centre. Can't wait to celebrate this unique event with everyone.




Organised by the  
ARS Toronto  
Roubina Chapter

## Heritage Day

Dedicated to the  
Armenian Community of  
Lebanon

October 28 & 29, 2023

Details to Follow



Lebanon  
The Beating Heart of The Diaspora